

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԶԿ-ՀՄԱԾՁԲ-26/1-Խ-2**

ք. Երևան

«20» *փետրվար* 2026թ.

Ջրային կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Մանուկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Լուսինե Աբրահամյանը՝ ծնված 14.03.1982թ., անձ, AL0262451, տրվ. 29.05.2023թ., 011-ի կողմից, հանրային ծառայությունների համարանիշը 6403820044 (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) և Ջրային կոմիտեի բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում Դոնորների հետ կապի համակարգող/թարգմանչի - ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 11,340,000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: Կատարողի մատուցման ենթակա ծառայության դիմաց վճարման ամսական հավասար համամասնությունը կազմում է 945,000 (իննը հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7

օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

Ջրային կոմիտե

ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա

ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011040467

ՀՎՀՀ 02555816

գլխավոր քարտուղար

scws@scws.am

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

(ստորագրություն)

Կ. Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Լուսինե Աբրահամյան

Հասցեն՝ 0002, ք. Երևան Փարպեցու 9բ-15,

Անձ. AL0262451, տրվ. 29.05.2023թ., 011-ի

կողմից, հանրային ծառայությունների


համարանիշը 6403820044

Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ

Հ/Հ 1570026210170200

Հեռ. 099722133

Էլ. հասցե՝ lusy.abrahamyan@gmail.com

 Լ. ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հ դրամ»

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը*
85311210/18	խորհրդատվության ծառայություններ	*կարդավ ստորև	դրամ	11,340,000	1	Ծառայությունները մատուցվում են Զրային կոմիտեում՝ Վարդանանց 13ա կամ Վարդանանց փակուղի 8 հասցեներում	Ծառայությունները մատուցվելու են «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE) շրջանակում, ոչ ուշ քան 30.12.2026թ.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի (WISE)»

Չափաբաժին 3

«Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագրի Դոնորների հետ կապի համակարգող/թարգմանիչ ծառայության նկարագիրը

Ծրագրի իրականացման մարմինը

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) Զրային կոմիտե (ԶԿ)

1. Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) Համաշխարհային բանկի (ՀԲ), Զարգացման ֆրանսիական գործակալության (ՉՖԳ) և Եվրոպական միության (ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացնում է «Հայաստանի ջրի և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր. 1-ին փուլ» ծրագիրը: Ծրագրի զարգացման նպատակն է (ԾՁՆ) ապահովել բարելավված հասանելիություն դեպի արդյունավետ, ֆինանսապես կայուն ոռոգման ու գյուղական բնակավայրերում անվտանգ կառավարվող ջրամատակարարման և ջրահեռացման (ԶՆԶ) ծառայությունները Հայաստանի ընտրված տարածքներում: Ծրագիրը հանդիսանում է Բազմափուլային զարգացման մոտեցման (ԲՁՄ) մի մաս, որի նպատակն է բարելավել ոռոգման և գյուղական ՋՁ ծառայությունների մատուցումը Հայաստանում: Ծրագիրը նպատակ ունի բարձրացնել Հայաստանի ջրային ռեսուրսների անվտանգ կառավարման մակարդակը՝ հետևյալ հիմնական ուղղություններով. ա) ընտրված ոռոգման համակարգերի արդիականացում, բ) ընտրված գյուղական համայնքներում և մարզերում ջրամատակարարման բարելավում, և գ) ջրային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ, ֆինանսական և բնապահպանական կայունության ամրապնդում:

ԶՈԾԲ ծրագրի առաջին փուլը բաղկացած է հետևյալ հիմնական բաղադրիչներից.

- Բաղադրիչ 1. Ջրային ոլորտի բարեփոխումներ և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում**
 Ենթաբաղադրիչ 1.1. Ջրային ռեսուրսների ազգային քաղաքականության և պլանավորման ամրապնդում
 Ենթաբաղադրիչ 1.2. Ոռոգման ոլորտի կառավարման և ծառայությունների մատուցման բարելավում
- Բաղադրիչ 2. Գյուղական բնակավայրերում ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում**
 Ենթաբաղադրիչ 2.1. Ինստիտուցիոնալ ամրապնդում, կարողությունների զարգացում և կարգավորող բարեփոխումներ
 Ենթաբաղադրիչ 2.2. Տեխնիկատնտեսական հիմնավորումներ և ենթակառուցվածքների ներդրումներ
- Բաղադրիչ 3. Ոռոգման ենթակառուցվածքների և համակարգի կառավարման արդիականացում**
 Ենթաբաղադրիչ 3.1. Կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայուն ոռոգման ենթակառուցվածքների արդիականացում և համակարգի կառավարում
 Ենթաբաղադրիչ 3.2. Վերահսկիչ կառավարման և տվյալների հավաքագրման (SCADA) համակարգի ներդրում
- Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում**

2. ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Սույն առաջադրանքի նպատակն է ապահովել արդյունավետ համակարգում, հաղորդակցություն և կապ ՋՈԾԲ ծրագրի իրականացման թիմի (ԾԻԹ), Միջազգային ֆինանսական հաստատությունների (ՄՖՀ) կողմից ֆինանսավորվող այլ ջրային ոլորտի ծրագրերի, ինչպես նաև պետական համապատասխան կառույցների և ջրային ոլորտի ծրագրերի ու նախաձեռնությունների պլանավորման և իրականացման մեջ ներգրավված պետական ու ոչ պետական այլ շահագրգիռ կողմերի միջև: Առաջադրանքի նպատակն է աջակցել գործողությունների համապատասխանեցմանը, տեղեկատվության փոխանակմանը և զուգահեռ ու փոխլրացնող ծրագրերի միջև սիներգիայի ստեղծմանը՝ ոլորտի ընդհանուր արդյունավետությունը բարձրացնելու և կրկնակի աշխատանքների իրականացումից խուսափելու նպատակով:

Սույն առաջադրանքի մյուս նպատակն է ապահովել բարձրորակ գրավոր և բանավոր թարգմանության ծառայություններ՝ ՋՈԾԲ ծրագրի իրականացման ընթացքում հայերեն և անգլերեն խոսող շահագրգիռ կողմերի միջև ճշգրիտ և արդյունավետ հաղորդակցություն ապահովելու համար: Արդյունավետ հաղորդակցությունը, պատշաճ փաստաթղթավորումը ինչպես անգլերեն, այնպես էլ հայերեն լեզուներով, կենսական նշանակություն ունեն ազգային շահագրգիռ կողմերի, ԶԿ-ի, ԾԻԹ-ի և միջազգային գործընկերների, այդ թվում՝ ՀԲ-ի և ՀՖԳ-ի միջև սահուն համագործակցությունն ապահովելու համար:

Դոնորների հետ կապի համակարգող / թարգմանիչը պատասխանատու է լինելու ՋՈԾԲ ծրագրի իրականացման խմբի, ջրային ոլորտում ՄՖՀ-ների կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի, ինչպես նաև համապատասխան պետական կառույցների միջև կառուցվածքային և շարունակական համակարգումն ապահովելու համար: Այն ներառում է տեղեկատվության փոխանակման ապահովումը, դոնորների և ՄՖՀ-ների հետ հանդիպումների ու նամակագրության համակարգումը, ինչպես նաև աջակցությունը ջրային ոլորտի զուգահեռ նախաձեռնությունների միջև գործողությունների համապատասխանեցմանը: Սույն պաշտոնի շրջանակներում անհրաժեշտ է նաև ապահովել տեխնիկական, վարչական և պայմանագրային նյութերի ճշգրիտ ու ժամանակին գրավոր և բանավոր թարգմանության տրամադրում՝ արդյունավետ հաղորդակցությանն աջակցելու նպատակով:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դոնորների հետ կապի համակարգող/թարգմանիչը պետք է իրականացնի, սակայն չսահմանափակվի, հետևյալ առաջադրանքներով.

1. Հանդես գալ որպես համակարգման և հաղորդակցման հիմնական պատասխանատու ՋՈԾԲ ԾԻԹ-ի և ջրային ոլորտի ծրագրերը ֆինանսավորող ՄՖՀ-ների միջև, այդ թվում՝ ՀԲ-ը, ՖՋԳ-ը, Եվրոպական միությունը և այլ համապատասխան ՄՖՀ-ներ:
2. Ապահովել տեղեկատվության կանոնակարգված փոխանակումը և համակարգումը ՋՈԾԲ-ի և ջրային ոլորտի այլ ծրագրերը ֆինանսավորող ՄՖՀ-ների միջև, ինչպես նաև համապատասխան պետական և ոչ պետական կառույցների միջև՝ նպատակ ունենալով ապահովել գործողությունների համապատասխանեցումը, մոտեցումների հետևողականությունը և աշխատանքների կրկնողության բացառումը:
3. Աջակցել դոնորների հետ համակարգման աշխատանքներին, ներառյալ՝ հանդիպումների, աջակցող առաքելությունների, նամակագրության և Ծրագրի շրջանակներում ՄՖՀ-ների ներգրավվածությանն առնչվող հաշվետվությունների նախապատրաստումը, կազմակերպումը և արդյունքների հետագա մշակումը:
4. Մատուցել անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն ճշգրիտ ու ժամանակին գրավոր և բանավոր թարգմանչական ծառայություններ, որոնք անհրաժեշտ են Ծրագրի արդյունավետ իրականացման և ՄՖՀ-ների ու այլ միջազգային գործընկերների հետ փոխգործակցության համար:
5. Ապահովել պրոֆեսիոնալ բանավոր թարգմանություն հանդիպումների, բանակցությունների, աշխատաժողովների, դոնորների վերահսկողական առաքելությունների, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների և դաշտային այցերի ընթացքում:
6. Ապահովել արդյունավետ հաղորդակցություն Ծրագրի ինժեներական, ինստիտուցիոնալ, ֆինանսական, բնապահպանական և սոցիալական ասպեկտներին առնչվող տեխնիկական քննարկումների ժամանակ՝

ապահովելով տեխնիկական բովանդակության, որոշումների և դոկումենտների պահանջների ճշգրիտ փոխանցումը:

7. Թարգմանել Ծրագրի պաշտոնական նամակագրությունը, հուշագրերը, հանդիպումների արձանագրությունները, հաշվետվությունները և հետագա հաղորդակցությունը՝ դոկումենտների կիրառելի չափանիշների և մասնագիտական էթիկայի համաձայն:
8. Թարգմանել Ծրագրի հիմնական փաստաթղթերը, ներառյալ՝ Տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունները, նախագծային փաստաթղթերը, Տեխնիկական առաջադրանքները (SU), գնումների և մրցության փաստաթղթերը, պայմանագրերը և ԾԻԹ-ի կամ խորհրդատուների կողմից պատրաստված հաշվետվությունները՝ ապահովելով վերջիններիս համապատասխանեցումը ՄՖՀ տերմինաբանությանը, քաղաքականությանը և ձևաչափի պահանջներին:
9. Աջակցել գնումներին առնչվող փաստաթղթերի պատրաստմանը և թարգմանությանը, ինչպես նաև ցուցաբերել լեզվական աջակցություն միջազգային խորհրդատուների կամ կապալառուների մասնակցությամբ գնահատման գործընթացներին:
10. Ուղեկցել ՄՖՀ ներկայացուցիչներին վերահսկողական առաքելությունների, տեղական այցերի և տեխնիկական վերահսկողական այցերի ժամանակ՝ մատուցելով թարգմանչական ծառայություններ և ապահովելով հաղորդակցությունը կապալառուների, տեղական մարմինների և շահառուների հետ:
11. Աջակցել Ծրագրի պաշտոնական փաստաթղթերի և հաշվետվությունների երկլեզու տարբերակների պատրաստմանը՝ ՀՀ կառավարությանը, Ծրագրի կառավարման խորհրդին և ՄՖՀ-ներին ներկայացնելու համար:
12. Ապահովել տեխնիկական տերմինաբանության միասնականությունը՝ համագործակցելով տեխնիկական մասնագետների հետ, ոլորտային առանձնահատուկ լեզուն հստակեցնելու նպատակով, ինչպես նաև վարելով անգլերեն և հայերեն հիմնական տերմինների ու հապավումների Ծրագրային բառարան:
13. Իրականացնել սույն առաջադրանքի շրջանակներից բխող այլ գործառույթներ, որոնք կարող են ողջամտորեն պահանջվել Ծրագրի ղեկավարի կամ Ծրագրի ղեկավարի տեղակալի կողմից:
14. Բացի վերը նշված պարտավորությունները Դոկումենտների հետ կապի համակարգող/թարգմանիչը պարտավոր է Ջրային կոմիտեի նախագահի և/կամ նրա հանձնարարությամբ կամ հրամանով համապատասխան ոլորտ(ներ)ը համակարգող Ջրային կոմիտեի նախագահի տեղակալ(ների) հանձնարարությամբ, տրամադրել թարգմանչական ծառայություններ Ջրային կոմիտեի կողմից իրականացվող՝ տարեկան բյուջետային ծրագրերի շրջանակներում կամ միջազգային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի համար: Նշված ծառայությունները կտրամադրվեն ջրային համակարգերի և/կամ հիդրոտեխնիկական կառույցների տեխնիկատնտեսական ուսումնասիրության, նախագծման և կառուցման (վերակառուցման, հիմնանորոգման, վերականգնման, վերազինման, վերանորոգման) փուլերում գտնվող ծրագրերի իրականացման ընթացքում, ինչպես նաև նոր մշակվող ծրագրերի պլանավորման և իրականացման փուլերում:

4. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՐՁ

1. Բարձրագույն կրթություն լեզվաբանության, թարգմանչության, բանասիրության կամ հարակից ոլորտում: Ճարտարագիտության, բնապահպանական գիտությունների կամ հանրային կառավարման ոլորտում լրացուցիչ կրթությունը կդիտվի որպես առավելություն:
2. Առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ դոկումենտների և ՄՖՀ-ների հետ կապի ապահովման գործառույթներում, այդ թվում՝ համակարգումը, հաղորդակցությունը, ինչպես նաև հանդիպումների կազմակերպումն ու տեղեկատվության փոխանակումը:
3. Պետական կառույցների, ծրագրերի իրականացման թիմերի և այլ շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային փորձ՝ ՀԲ-ի կամ այլ ՄՖՀ-ների կողմից ֆինանսավորվող այլ ծրագրերի համատեքստում:
4. Առնվազն 5 տարվա մասնագիտական գրավոր և բանավոր թարգմանչական փորձ հայերեն-անգլերեն և անգլերեն-հայերեն ուղղություններով, նախընտրելի է՝ տեխնիկական, իրավական կամ ինստիտուցիոնալ ծրագրերի համար:
5. Թարգմանչություններ կատարելու փորձ ՀԲ-ի/ՄՖՀ կողմից ֆինանսավորվող ծրագրերում կամ միջազգային զարգացման ծրագրերում:
6. Ծանոթություն ջրային ռեսուրսների կառավարման, ոռոգման, գյուղական ջրամատակարարման, բնապահպանական և սոցիալական երաշխիքների, և ինստիտուցիոնալ բարեփոխումների ոլորտի տեխնիկական տերմինաբանությանը:
7. Հմտություններ բարձր մակարդակի հանդիպումների և դաշտային այցերի ժամանակ հաջորդական և համաժամանակյա թարգմանչություն ապահովելու համար:
8. Գրավոր և բանավոր հաղորդակցման գերազանց հմտություններ ինչպես հայերեն, այնպես էլ անգլերեն լեզուներով:
9. Մեծ ուշադրություն մանրուքների նկատմամբ, ճշգրտություն և սեղմ ժամկետներում առաջադրանքները կատարելու ունակություն:

5. ԻՆՍՏԻՏՈՒԹՅՈՒՆԱԼ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՋՈԾԲ ծրագրի Դոնորների հետ կապի համակարգողի/թարգմանչի ծառայությունները ձեռք են բերվում խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում՝ առաջադրանքի իրականացման համար սահմանված ժամկետի համաձայն: Ծառայությունները մատուցվում են ամբողջական աշխատանքային գրաֆիկով, Երևանում: Անհրաժեշտության դեպքում, կիրականացվեն գործուղումներ դեպի ծրագրի տարածք:

ՋՈԾԲ Դոնորների հետ կապի համակարգողը/թարգմանիչը հաշվետու է ՋՈԾԲ Ծրագրի ղեկավարին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011040467
ՀՎՀՀ 02555816
գլխավոր քարտուղար
scws@scws.am



Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Լուսինե Աբրահամյան
Հասցեն՝ 0002, ք. Երևան Փարպեցու 9բ-15,
Անձ. AL0262451, տրվ. 29.05.2023թ., 011-ի
կողմից, հանրային ծառայությունների
համարանիշը 6403820044
Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570026210170200
Հեռ. 099722133

Էլ. հասցե՝ lusy.abrahamyan@gmail.com

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
(ստորագրություն)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության											
			փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
3	85311210/18	խորհրդատվության ծառայություններ	1,890,000	2,835,000	3,780,000	4,725,000	5,670,000	6,615,000	7,560,000	8,505,000	9,450,000	10,395,000	11,340,000	11,340,000

* Վճարման եղանակ գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զրային կոմիտե
 ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
 ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011040467
 ՀՎՀՀ 02555816

գլխավոր քարտուղար
 scws@scws.am



Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
 (ստորագրություն)
 Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Լուսինե Աբրահամյան
 Հասցե՝ 0002, ք. Երևան Փարպեցու 9բ-15,
 Անձ. AL0262451, տրվ. 29.05.2023թ., 011-ի
 կողմից, հանրային ծառայությունների
 համարանիշը 6403820044
 Բանկը՝ Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ 1570026210170200
 Հեռ. 099722133

Էլ. հասցե՝ lusy.abrahamyan@gmail.com

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
 (ստորագրություն)

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դրուս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն